**«ԿԱՄՈՒՐՋ» ՈՒՎԿ ՓԲԸ**

| | |
|---|---|
| **ՊԱՇՏՈՆԸ** | Վարկային մասնագետ |
| **ԱՇԽԱՏԱԺԱՄԱՆԱԿԸ** | Լրիվ աշխատաժամանակ |
| **ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ** | անորոշ ժամկետով |
| **ՎԱՅՐԸ** | ՀՀ, Կոտայքի մարզ, ք.Հրազդան |

**ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ**

«ԿԱՄՈՒՐՋ» ՈՒՎԿ ՓԲԸ-ն հայտարարում է մրցույթ Ընկերության «Հրազդան» մասնաճյուղի վարկային մասնագետի թափուր պաշտոնը համալրելու նպատակով: Աշխատողի հիմնական գործառույթները ներառում են պոտենցիալ վարկառուներ գտնելու աշխատանքների իրականացում, վարկերի տրամադրում, տրամադրված վարկերի վերադարձելիության ապահովում:

**ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

- Ընկերության ծառայությունների վերաբերյալ տեղեկատվության տարածում,
- Հաճախորդների ներգրավում,
- Վարկատեսակների վաճառք,
- Վարկային գործի կազմում և վարում,
- Պոտենցիալ վարկառուի կողմից ներկայացված փաստաթղթերի փաթեթի ամբողջականության ապահովում,
- Վարկային նախագծերի որակյալ փորձաքննության իրականացում՝ համաձայն Ընկերության ներքին իրավական ակտերի,
- Նոտարական գրասենյակում գրավի պայմանագրերի ձևակերպում /անհրաժեշտությունից ելնելով/,
- Վարկերի նպատակային օգտագործման նկատմամբ հսկողության իրականացում,
- Վարկերի ընթացիկ մոնիթորինգի իրականացում,
- Վարկերի վերադարձելիությանն ուղղված գործընթացների իրականացում,
- Վարկերի պայմանների վերանայման, դատական կարգով բռնագանձման վարույթների հարուցման, վարկերի վերակառուցման կապակցությամբ իրեն վերապահված գործառույթների իրականացում
- Հաշվետվությունների կազմում և ներկայացում:

**ՊԱՀԱՆՋՎՈՂ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄՆԵՐ**

- բարձրագույն կրթություն (ցանկալի է տնտեսագիտական կամ ֆինանսական),
- ֆինանսաբանկային ոլորտում աշխատանքային փորձը ցանկալի է,
- հանձնարարված առաջադրանքները ժամանակին և պատշաճ որակով կատարելու ունակություն,
- վերլուծելու ունակություն,
- կազմակերպելու և առաջնորդելու ունակություն,
- հաղորդակցման և բանակցություններ վարելու հմտություններ,
- թիմային աշխատանքի հմտություններ,
- լարված իրավիճակում լուծումներ գտնելու ունակություն:

ԱՅԼ ՊԱՀԱՆՋՆԵՐ

- աշխատանքը ենթադրում է աշխատաժամանակի մինչև 80%-ը գրասենկայից դուրս աշխատելու պատրաստակամություն:

**ԴԻՄԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ**

Համապատասխան որակավորում ունեցող անձանց խնդրում ենք իրենց ինքնակենսագրությունը (CV) հայերեն լեզվով ներկայացնել ՀՀ, ք.Հրազդան, Միկրոշրջան թաղ., 4-րդ փ., 6-6/1, կամ ուղարկել էլեկտրոնային փոստով՝ anahit.manukyan@kamurj.am՝ հստակ նշելով պաշտոնը, որին հավակնում են:

| | |
|---|---|
| ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՍԿԻԶԲԸ՝ | 17 մարտի 2023 |
| ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՎԵՐՋՆԱԺԱՄԿԵՏԸ՝ | 31 մարտի 2023 |